

ԿԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿՐԿՆԱԿՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՄԱՆԻՇԱՅԻՆ
ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐԸ ԴԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

Հայ ժողովուրդը ի վերուստ պատմական ճակատագրով կապված է եղել պարսից ժողովրդի հետ: Երկու ժողովուրդները ավելի քան 2700 տարի ապրել ու գոյատևել են կողք կողքի լեզվական, էթնիկական, մշակութային մերձեցումներով, սակավ դեպքերում՝ նաև օտարումներով: Այդ շփումներն ու մերձեցումները, որոնք նոր որակով ու արտահայտություններով շարունակվում են մինչև այսօր, իրենց անջնջելի հետքն են թողել հարևան երկու երկրների կյանքի, կենցաղի ու հոգևոր արժեքների անխտիր բոլոր բնագավառներում, բայց ամենից ավելի դրանք փոխադարձ ազդեցությունների ու ներթափանցումների տեսքով արտահայտվել են երկու լեզուների բառապաշարում, մտածողության ու, մասնավաճ, լեզվամտածողության մեջ:

Եվ թեև հայոց կողմից քրիստոնեության ընդունումը չորրորդ դարի սկզբներին մեզ անբաժանելիորեն կապեց հունաբյուզանդական քաղաքակրթությանն ու կրոնաբարոյական գաղափարախոսությանը և զգալիորեն հեռացրեց պարսկական քաղաքակրթությունից, սակայն մինչ այդ եղած լեզվական փախազդեցությունները այնքան խորն էին ու արմատական, որ հայերի էթնիկական, կրոնական ու մշակութային նոր հայացքն ու կողմնորոշումը դեպի Արևմուտք ի գործու չեղավ չեզոքացնելու, առավել ևս վանելու վաղմջական ժամանակներից եկող հայ և պարսից ժողովուրդների լեզվական, գրական-զեղարվեստական և ընդհանրապես պատմական-հասարակական առնչություններն ու փոխազդեցությունները:

Այդ առնչություններն ու փոխադարձ ներթափանցումները ամենատարբեր դրսևորումներով, տարբեր չափերով ու ձևերով, տարբեր արտահայտողականությամբ /ինտենսիվությամբ/ ու արդյունավետությամբ շարունակվում են նաև այսօր քաղաքական ու կրոնաբարոյական նոր պայմաններում:

Այդ կապերին ու փոխադարձ ազդեցություններին չի կարողացել դիմակայել ու խոչընդոտել անգամ այնպիսի հզոր մի գործոն, ինչպիսին էր նախ զրադաշտական, ապա ավելի ուշ՝ իսլամական կրոնաբարոյական գաղափարախոսությունը, որի դավանողն էր պարսից ժողովուրդը, և որի ազդեցության ոլորտի մեջ էին գտնվում շատ ու շատ երկրներ ու ժողովուրդներ:

Հայաստանում քրիստոնեություն, իրանում մահմեդականություն /իսլամ/ ընդունած երկու ժողովուրդները պատմահասարակական նոր պայմաններում

որդեզրեցին կրոնաիմաստասիրական նոր գաղափարներ, մեկը՝ Աստվածաշնչի, մյուսը՝ Ղուրանի ոգուն հարազատ, դրանցից բխող: Մեկի ականջին սկսեցին հնչել աստվածաշնչյան պատգամները, շարական ու սաղմոս, մյուսի ականջին Ազան ու իսլամական գաղափարներ, թեև աստվածորությունը երկուսի համար էլ պահպանեց իր նախաստեղծ հարազատությունը:

Երկու ժողովուրդների դավանաբանական իրարից տարբեր նոր արժեքների ու սկզբունքների ձևավորումն ու զարգացումը, սակայն, բնավ չօտարացրեց և չթուլացրեց նրանց հոգևոր-մշակութային կապերը, մասնավորապես լեզվական փոխառնությունները:

Երկարատև այս հարաբերությունների ու փոխադարձ շփումների արդյունքն այն եղավ, որ, ինչպես նկատում է Գր.Աճառյանը, «Հայերեն լեզուն մեծապես ազդվեց պարսկերենից և վերջրեց նրանից բազմաթիվ բառեր, ոճեր ու դարձվածքներ: Այնքան, որ, զարմանալի թող չլինի, եթե ասենք, որ կարելի է գրել ամբողջ էջեր, որոնք հայերեն և պարսկերեն համարյա նույն դուրս գան» /Գ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Եր., 1941, էջ 223/:

Հայերենի, նաև պարսկերենի վերլուծական բարդությունները առանձին-առանձին քննվել են տեսական ու գործնական տարաբնույթ մի շարք աշխատություններում, քերականության դասագրքերում, մենագրական այլևայլ հետազոտություններում: Երկու լեզուների բառակազմական ընդհանրությունների մասին, սակայն, ցարդ չի խոսվել: Սույն մեր փորձը առաջինն է:

Չողվածի նպատակն է ցույց տալ հայերենի վերլուծական կրկնավոր բարդությունների կաղապարման /մոդելավորման/ մի քանի առավել կարևոր յուրահատկություններ և պարսից լեզվում եղած համապատասխան կառույցների՝ դրանց հետ ունեցած բառակազմական ընդհանրությունները, այլև համանման բարդությունների իմաստների հոմանիշային համարժեքները երկու լեզուներում:

Կրկնավոր բարդությունները (reduplicating compound, *редубликация*) ինչպես հայերենում, այնպես էլ այլ լեզուներում բառաբարդման տեխնիկայի հին արտահայտություններից են, գուցե և ամենահինը: Ընդհանրապես նշելի է, որ բառակրկնությունը մեծ հնարավորություններ է պարփակում իր մեջ ոչ միայն բառային, այլև քերականական նորանոր իմաստներ արտահայտելու տեսակետից: Արմատի կրկնությունը երկրորդ, հազվադեպ նաև առաջին եզրում մեկ կամ երկու հնչյուն փոփոխելով կամ նույնիսկ անփոփոխ պահելով՝ հին ու նոր լեզուներում գոյացրել ու գոյացնում է քերականական նոր իմաստներ: Հին հայերենում, օրինակ, *առնել* բայի անցյալ կատարյալը կազմվել է *ար* արմատի կրկնությամբ՝ *ար+ար*, *արարի*, որից առաջացել են նոր բառեր՝ *արարել*, *արարիչ*, *արարված*, *արարողություն* և այլն: Լատիներեն *curro*

—վազում եմ ձևից կազմվել են cucusi — վազեցի, do — տալիս եմ ձևից՝ dedi — տվեցի ձևերը: Ճապոներեն hito — մարդ արմատի կրկնությամբ /երկրորդ բաղադրիչի առաջին հնչյունը փոփոխելով/ ստացվել է hito-bito — մարդիկ, այսինքն՝ հոգնակի թիվ:

Աֆրիկյան ակասեյե (akasele) լեզվում էլ բառարմատի կրկնությամբ կատարվում է խոսքամասային փոխանցում, ինչպես՝ bo — սևանալ, bombo — սև, ya — գեղեցկանալ, yaya — գեղեցիկ, dyo — բարի լինել կամ բարիանալ, dyodyo — բարի և այլն /տես Յ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հ. Ա. Եր., 1952, էջ 15 և հջ.:

Բառակրկնությունը, սակայն, անհամեմատ ավելի մեծ արդյունք է տալիս որպես բառակազմության միջոց: Լինելով բառակազմական տեխնիկայի ամենանախնական ու պարզագույն արտահայտությունը՝ կրկնավոր բարդությունները հայոց լեզվի բառապաշարը հարստացրել են նրա զարգացման բոլոր փուլերում՝ սկսած վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը: Այժմ ևս վերլուծական կրկնավոր բարդությունները հանդես են գալիս որպես հայերենի, նաև պարսկերենի բառակազմության ամենից ավելի կենսունակ արտահայտությունը:

Հայերենի վերլուծական կրկնավոր բարդությունները բնութագրվում են բառակազմական և բառաքերականական հետևյալ հիմնական հատկանիշներով:

1. Եզրերի միջև առկա է լինում միայն համադասական, բայց ոչ երբեք ստորադասական շարահյուսական խորքային հարաբերություն, ինչպես՝ գունդ-գունդ, զույգ-զույգ, տուն-տուն, լավ-լավ, մեկ-մեկ, արագ-արագ և այլն:

2. Կրկնավոր բարդությունների միջոցով հաճախ տեղի է ունենում խոսքամասային փոխանցում, ասենք՝ գոյականից ստեղծվում են ածականներ, ինչպես՝ փունջ-փունջ /ծաղիկներ/, մակբայներ /Չորքը շարժվեց/ գունդ-գունդ /զնդերով, զնդերի պես, գունդը զնդի ետևից և այլն/, թվականից՝ մակբայներ մեկ-մեկ /Մեկ-մեկ սիրտ ծակում է. Հեռացան մեկ-մեկ/, բացարձակ թվականից բաշխական թվականներ մեկ-մեկ /մեկական/, երու-երկու /երկուական/, ածականից մակբայներ, ինչպես՝ դառը-դառը /դառնագին, Դառը-դառը ողբում էր/, մանր-մանր /մանր-մանր բրդել/ և այլն:

3. Կրկնավոր բարդությունները աչքի են ընկնում իմաստային կառուցվածքի /դաշտի/ բազմազանությամբ: Դրանք կարող են նշանակել հետևյալ իմաստները.

ա/ Բազմակիություն. օրինակ տեսակ-տեսակ /բազմատեսակ, շատ տեսակների/, խումբ-խումբ /խմբերով, շատ խմբերով/: Իրենց արտահայտած

այս իմաստային բազմակիության հիմունքով դրանք պահանջում են հոգնակի որոշյալ /տեսակ-տեսակ *ապրանքներ*, խումբ-խումբ *երեխաներ* և այլն/:

բ/ *Անորոշություն*, օրինակ՝ *տեղ-տեղ* /որոշ տեղեր, *մեկ-մեկ* /երբեմն/, *ժամանակ առ ժամանակ* /երբեմն, երբեմնակի/:

գ/ *Բաշխականություն*, օրինակ *հինգ-հինգ* /հինգական, յուրաքանչյուրին՝ հինգ/, *վեց-վեց* /վեցական, յուրաքանչյուրին՝ վեց/, *խումբ առ խումբ* /յուրաքանչյուր խումբը առանձին/:

դ/ *Սաստկականություն* կամ *գորեղացում* օրինակ *արագ-արագ* /ավելի արագ/, *խակ-խակ* /շատ խակ/, *սև-սև* /շատ սև և այլն/:

ե/ *Փաղաքականություն* կամ *նվազականություն*, օրինակ *կոկլիկ-սոկլիկ*, *հեզ ու մեզ*, *լավիկ-մավիկ* և այլն/:

զ/ *Հավաքականություն*, *ընդհանուր ամբողջություն*, օրինակ՝ *աման-չաման*, *մարդ-մուրդ*, *ծակուծուկ* և այլն/:

է/ *Առանձնություն* կամ *առանձնացում*, օրինակ՝ *ես ու ես*, *քեզ ու քեզ*, *իրեն-իրեն* և այլն/:

Իմաստային այս յուրահատկությունները բնորոշ են թե հայերենում, թե պարսկերենում առկա կրկնավոր բարդություններին/:

Ըստ բաղադրիչների հնչյունային կազմի՝ կրկնավոր բարդությունները և՛ հայերենում, և՛ պարսկերենում լինում են ա/ *անհնչյունափոխ* և բ/ *հնչյունափոխված*։

Ա. *Անհնչյունափոխ* կրկնավորները բնութագրվում են նրանով, որ բաղադրիչներից ո՛չ մեկը հնչյունափոխման չի ենթարկվում/:

Այսպիսի բարդությունները հայերենում սովորաբար կազմվում են կարճ, միավանկ, երբեմն երկվանկ բառերից։ Եռավանկ, առավել ևս քառավանկ ու ավելի վանկեր ունեցող բառերից շատ սակավ են կազմվում։ Նման կրկնավորներ գոյանում են առավելապես նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերից։ Նյութական իմաստից զուրկ խոսքի մասերից՝ կրկնավորներ են կազմում ծայնարկությունները՝ իրենց բոլոր երեք տարատեսակներով /զգացական, կոչական, բնածայնական/:

Հաճախականության տեսակետից թե հայերենում, թե պարսկերենում ամենամեծ քանակություն են ներկայացնում հատկանիշային իմաստ արտահայտող խոսքի մասերից՝ ածականից, թվականից /հիմնականում՝ բացարձակ/, հատկանիշանիշ դերանուններից, մակբայից կազմված կրկնավորները։ Ըստ որում՝ պարսկերենում դրանք հաճախ ունենում են գրեթե նույն կաղապարները, ինչ որ հայերենում են, համարժեքներ միևնույն կազմությամբ, այն էլ՝ հոմանիշների շարքով, այսինքն՝ մեկից ավելի։ Այսպես՝

1. *Ածականից* կազմված կրկնավորներ. *հյանուշ-անուշ /դուրեկան, ախորժեղի/*, պրսկ *شیرین شیرین* /širin-širin, širine-širin/, *ազահ-ազահ /ազահաբար/*, պրսկ *با هرمن وولع* ba hermo vale'), *զատ-զատ /առանձին-առանձին, ջոկ-ջոկ/*, պրսկ *تک تکری یکی یکی* (joda-joda, eki-eki, tak-tak), սև-սև /շատ սև, մուգ սև/, պրսկ *سیاه سیاه, سیاه رنگ* (siyah-siyah, siyahrang), *լավ-լավ /ընդհանրապես լավ, հաճելի, օգտակար, բարձրորակ/* պրսկ *خوب خوب, خوب خوب* (xub-xub, xube-xub, nike-nik, خوب خوب), ընտիր-ընտիր):

Եկատելի է, որ հայերեն ձևերի պարսկերենում ածականի կրկնությամբ կազմված համարժեքները սովորաբար ունենում են հոմանիշների շարքեր կամ ձևակազմական որոշ տարբերակներ՝ e հոդակապով և առանց հոդակապի (*ما شیرین شیر خوب* . *širin-širin* یا *širine-širin*, *xub-xub* և *xube-xub* և այլն):

Հարկ է նշել, որ թե հայերենում և թե պարսկերենում ածականների կրկնությունից կազմված բաղադրությունները կարող են հանդես գալ և որոշչային, և պարագայական գործառնությունով: Ըստ որում որոշչային կիրառության դեպքում, պայմանավորված բաղադրության բառային իմաստի կառուցվածքով, լրացյալը սովորաբար ստանում է հոգնակի թիվ. օրինակ *լավ-լավ ապրանքներ, սիրուն-սիրուն աղջիկներ* (*د ختر های خوشگل خوشگل* doxtarhae xošgel-xošgel) և այլն:

Հոգնակի գոյականի կիրառությունը նման զուգորդություններում պայմանավորված է նրանով, որ ածականների կրկնությամբ ոչ միայն սաստկացվում, զորեղացվում է հատկանիշային իմաստը, այլև արտահայտվում է բազմակիության նշանակություն, այսինքն՝ հատկանիշը աղերսվում է *ոչ թե մեկ*, այլ *շատ* և, մասնավոր, *տարբեր առարկաների /հմտ նաև՝ սուր-սուր փշեր, մուր-մուր գործեր, ծանր-ծանր փորձություններ* և այլն):

Իսկ երբ նման կրկնավորները գործառվում են բայի հետ, դրսևորում են գործողության կամ եղելության բազմակիություն, կրկնություն. հմտ. *թեյի բաժակը լիքը-լիքն է լցնում*, այսինքն՝ *միշտ /մշտապես, շարունակաբար/ այդ ձևով /կամ այդ չափով/ է լցնում*:

2. *Գոյականի* կրկնությամբ կազմվում են որակական ածականներ: Սրանք ևս շատ կրկնավոր ածականների նման դրսևորում են բազմակիության, այլազանության, բազմազանության նշանակություններ, ինչը նույնպես թե հայերենում, թե պարսկերենում պարտադրում է հոգնակի որոշյալ: Հմտ. *տեսակ-տեսակ /զանազան, բազմազան, շատ տեսակների ծաղիկներ/* *وا جو* (golhae gunegun, jur va jur), *խումբ-խումբ /շատ խմբեր ունեցող, խմբերով/ զինվորականներ* . *دسته -دسته , گروه گروه* (daste-daste, goruh-goruh):

Կրկնավոր գոյականները կարող են կիրառվել նաև բայի հետ՝ նշելով գործողության հոգնակիությունը՝ համատեղված կամ լրացված իմաստային այլ երանգներով /կերպի, ձևի, տեղի և այլն/։ հմմտ. Զինվորները շարժվեցին *խումբ-խումբ* = *շարժվեցին խմբերով* կամ *խումբ խմբի հետևից*։ Կամ- *տեղ-տեղ* = *որոշ տեղեր այստեղ ու այնտեղ*։ պրսկ. *جا به جا* *بهمی جا* (Ja ja, ja be ja, ba'zi ja ha)։ *Տեղ-տեղ ընտրություններ պետք է տեղի ունենան*։ *կաթիլ-կաթիլ* = կաթիլ կաթիլի հետևից, շարունակ, անընդհատ կաթելով *قطره قطره* (šotre-šotre) [Չյունը հալվում, *կաթիլ-կաթիլ* հոսում է ցած] և այլն։

Նշելի է, որ երկու լեզուներում էլ կրկնավոր գոյականները հավասարապես ածականական և մակբայական իմաստներ են արտահայտում, ինչն էլ պայմանավորում է նրանց թե որոշչային, թե՛ պարագայական շարահյուսական գործառույթները։

Դրա հետ միասին, մասնավորապես հայերենում, պատահում են գոյականներ, որոնց կրկնությամբ կազմվում են միայն ածականներ, և կան գոյականներ էլ, որոնց կրկնավոր բաղադրությունները միայն մակբայական նշանակություններ են ստանում։ Այսպես միայն ածականական իմաստ են պարունակում *տեսակ-տեսակ* /խաղալիք/, *գույն- գույն* /մատիտներ/, *փունջ-փունջ* /ծաղիկներ/, *ծով-ծով* /աչքեր/։

Առավելապես մակբայական իմաստ են արտահայտում *բառ-բառ*, *ալիք-ալիք*, *վանկ-վանկ*, *տող-տող* /արտագրել, արտասանել, կարդալ *վանկ-վանկ*, *տող-տող*/ և այլն։

Վերջապես, գոյականների կրկնությամբ կարող են կազմվել բաղադրություններ, որոնք խոսքամասային փոխանցման չեն ենթարկվում, ասել է թե՛ պահում են իրենց բուն իսկ գոյականական իմաստը՝ հմմտ. Դ.Աղայանի ժանոթ բանաստեղծության տողերը. *-խոզիկ-խոզիկ*, մազիկ տուր, Սազից չինեն մի պարան /.../, *Կաղնի-կաղնի*, կաղին տուր, կաղինը տամ խոզիկին /Դ.Աղ., Երկ. ժող., Ա, 87/։

Գոյականի կրկնությամբ կազմված այսպիսի բաղադրությունները, պետք է ասել, պահում են ուժեղ արտահայտված ոճական արժեք։

3. *Մակբայներից* կրկնավոր բաղադրություններ երկու լեզուներում էլ կազմվում են։ Այս կաղապարումը երկուստեք բավականաչափ արտադրողական է։ Մակբայի կրկնությամբ, ինչպես կրկնավոր ածականների դեպքում, սովորաբար դրսևորվում են գործողության կամ եղելության կրկնություն, հաճախ հատկանիշի սաստկացում, զորեղացում, երբեմն, նայած մակբայի բառիմաստին, նաև նվազաբերություն։ Այսպես

ա/ կրկնություն գործողության հատկանիշի գործեղացման իմաստով.
արագ-արագ /քայլել, գնալ/ = ավելի արագ /քայլել, գնալ/: Պրսկ. *زود، بیشتر رفتن* (zud-zud, ba šetab raftan):

բ/ կրկնություն գործողության նվազեցման, նվազաբերության, քիչ, նաև՝ սակավ դեպքերում՝ երկար ընդմիջումներով կատարելու իմաստով: Ուշ-ուշ /գալ, գնալ, հանդիպել/: Պրսկ. *دیر دیر، دیر به دیر* (dir-dir, dir be dir) : Քիչ-քիչ /խմել/ = ոչ հաճախակի, սակավ առ սակավ /խմել ոգելից խմիչք/: Պրսկ. *نوشیدان کم، اندک اندک* (kam-kam, andak'-andak' (nušidan)) և այլն:

4. *Թվականների կրկնությամբ*, ինչպես նշվել է վերը, կազմվում են բաղադրյալ բառեր: Պրանց արտահայտում են երկու կարգի իմաստներ՝ համապատասխան գործառույթներով՝ *քանակական-որոշչային* և *քանակական-պարագայական*:

Նախ հարկ է նշել, որ թվականներից կրկնավոր բարդությունների կազմությունը ունի որոշակի սահմանափակություն: Երկու լեզուներում էլ այդպես է: Ոչ բոլոր թվականներից են կազմվում մասն բաղադրություններ, այլ միայն բացարձակ թվականներից, այն էլ՝ ոչ բոլոր: Սովորաբար կրկնավոր բարդություններ կազմվում են միայն միավորներից /մեկից մինչև տասը/, հմմտ. *هـ، մի-մի، մեկ-մեկ* (= մեկական, մարդագլուխ՝ մեկ, յուրաքանչյուրին մեկ): Պրսկ. *یکی یکی، بهر کدام یکی*, (yeki-yeki, be har kodam yeki). *երեք-երեք* (= երեքական, մարդագլուխ երեք և այլն). պրսկ. *سه تا سه تا، هر کدام سه تا* (seta-seta, barae har kodam se adad):

Այսպես կազմվում են նաև մեծ, բայց կարճ թվականներից՝ *քսան-քսան*, *հարյուր-հարյուր*, *հազար-հազար* /վերջինս կարող է նաև ընդհանրապես մեծ քանակություն, շատություն արտահայտել: Նույն իմաստով նույնպիսի կրկնավոր թվական է կազմվում նաև պարսից լեզվում. հմմտ. *هزار هزار* (hezar-hezar, բոց. *هزارهزار*): Ի դեպ հայոց *հազար* արմատը պահլավական ծագում ունի (hazarak): Եվ սա առաջինը հայոց մեջ ստուգաբանել է Գր. Մագիստրոսը «*Ֆազարս* ոչ է ըստ մեր լեզուիս, այլ գաւ ի Պարսից առեալ ընտանեցուցեալ մերոյ լեզուիս» /տես Գր. Մագիստրոսի Թղթերը. հրատարակեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապ., 1910, 95/: Այս մասին տես նաև *ՉԱճառյան*, Գայերեն արմատական բառարան, հ. Գ, եր., 1977, էջ 6/:

Ուշագրավ է, որ հայերենում բարդ թվականներից ևս կազմվում են կրկնավորներ, բայց խիստ ինքնատիպ ու յուրահատուկ կաղապարով: Մեծ կլոր թվականների դեպքում կրկնվում է բաղադրության առաջին եզրը, երկրորդը մնում է անփոփոխ, ինչպես *հինգ-հինգ հարյուր* (= հինգ հարյուրական, յուրաքանչյուրին հինգ), *հինգ-հինգ հազար* (= հինգհազարական, ամեն մեկին հինգ հազար) և այլն:

Կրկնավոր թվականները կարող են ունենալ իմաստային-գործառական հետևյալ բնութագրերը:

ա/ *Քանակական-որոշչային*: Այս կրկնավորները զուգորդվում են գոյականների հետ և արտահայտում են առավելապես՝ բաշխականություն: Տես վերի օրինակները:

Այսպիսի կիրառության դեպքում գոյական որոշյալը օրինաչափորեն դրվում է եզակի թվով և ոչ երբեք հոգնակի. ինչպես ածականներից կազմված կրկնավորների դեպքում՝ հմմտ. *սիրուն-սիրուն աղջիկներ, խումբ-խումբ երեխաներ, բայց հինգ-հինգ հոգի և ոչ հոգիներ, երկու-երկու խնձոր և ոչ խնձորներ*, Յուրաքանչյուրին նվիրեցի *երեք-երեք օրինակ* / և ոչ *օրինակներ* / և այլն:

Սիաժամանակ չենք կարող չնշել, որ չափակշռային միավորները ևս նման զուգորդություններում օրինաչափորեն կիրառվում են եզակի թվով: Դմմտ. *հինգ-հինգ մետր, հինգ-հինգ կիլոգրամ, հինգ-հինգ լիտր, հինգ-հինգ կիլոմետր, հինգ-հինգ խոր. մետր, հինգ-հինգ թուփ* / չախմատի գերարագ բլից խաղի մասին/, նաև պայմանական, իրադրային չափի միավորները *հինգ-հինգ գդալ, հինգ-հինգ բաժակ, հինգ-հինգ շիշ* և այլն: Ինչպես նշվեց վերը, նման թվականները կարող են արտահայտել նաև շատություն, բազմակիություն. տես վերի օրինակները:

Քանակական-որոշչային կիրառությամբ կրկնավոր թվականը խոսքամասային փոփոխության չի ենթարկվում, այսինքն՝ պահում է իր՝ թվական խոսքի մասի իմաստը:

բ/ *Քանակական-պարագայական*: Կրկնավորները, ինքնին հասկանալի է, կարող են զուգորդվել նաև բայ խոսքի մասի հետ և արտահայտել գործողության, եղելության քանակական, որոշ իմաստով՝ նաև որակական /ձևային/ հատկանիշներ: Նման բաղադրությունների այսպիսի գործառույթի դեպքում տեղի է ունենում կրկնավոր թվականի մակբայացում, այն է՝ գոյանում է խոսքամասային տարարժեքություն:

Այսպես՝ *հյ. մեկ-մեկ, պրսկ. یکی یکی (yeki- yeki)* կրկնավոր թվականը, բացի բաշխականության /որոշչային/ իմաստից, կարող է արտահայտել ևս երկու իմաստներ, ըստ որում՝ պարագայական, գործողության՝ ա/ *երբեմն-երբեմն, և բ/ հաջորդաբար, հերթով, մեկը մյուսի հետևից* կատարելը /կատարվելը/:

Սի-մի կրկնավորը նույնպես կարող է կիրառվել *մեկ առ մեկ, հերթով* նշանակություններով: Նշենք նաև, որ թե հայերենում և թե պարսկերենում *մեկ-մեկ / یکی یکی /* կրկնավորի պարագայական իմաստը կարող է արտահայտվել հոմանիշների շարքով. *հյ. մեկ առ մեկ, մեկը մյուսի հետևից, հաջորդաբար, հերթով* և այլն. *պրսկ. یکی یکی, هر کدام یک عدد, یکی در مقابل دیگری*:

ԿՃ , Ե Ե ԿՃ , Ե Կ Ե ԿՃ (gah be gah, gah-gah, gahegah, gahi-godari, yeki-yeki, har kodam ek' adad, eki dar moyöbele har yeki):

Կրկին գալով *մեկ-մեկ* և *մի-մի* կրկնավոր թվականներին՝ նշենք, որ դրանցից առաջինը ավելի մակբայական կիրառություն ունի, երկրորդը՝ ավելի որոշչային: Ասվածին հավելենք նաև, որ *մեկ* և *մի թվականներից ավելի հին է երկրորդը*: *Մեկ-ը կազմվել է մի-ից մի+ակ> մեկ* ճանապարհով:

5. Դերանունների կրկնությամբ թեև քիչ, բայց նույնպես կազմվում են կրկնավոր բարդություններ: Կրկնավոր դերանունների իմաստային կառուցվածքը նկատի ունենալով դրանք կարելի է բաժանել երկու խմբի: ա/ Կրկնավորներ, որոնք կազմված են *առարկայանիշ* /նաև, բնականաբար, *անձնանիշ*/ դերանուններից, բ/ կրկնավորներ, որոնք կազմված են հատկանիշանիշ դերանուններից:

ա/ Առարկայանիշ, այլև անձնական ու անձնանիշ դերանունների կրկնությամբ սովորաբար արտահայտվում են՝ *բաշխականության, առանձնության* իմաստներ, իբրև *ինքն իր համար, իր հետ*: Իրանիշ դերանունների կրկնությամբ ընդգծվում, գործողացվում է իմաստը, ինչպես՝ Եթե դու հանես արմատըս հողից, Որ ինձնից *ոչինչ- ոչինչ* չմնա, Ես կբարձրանամ, Ես կաճեմ նորից, Կծաղկեմ քո սև շիրիմի վրա /*Ֆ.Սահ.*, Կանաչ-կարմիր աշուն, 30/:

Դիտելի է, որ հոլովվող դերանունները կարող են բաղադրություն կազմել թե իրենց ուղիղ, ելակետային ձևով /*ով-ով, ինչ-ինչ, բոլոր-բոլոր* և այլն/, թե թեքված կերպով /*իրեն-իրեն, ում-ում* և այլն/:

բ/ Հատկանիշային իմաստ բովանդակող դերանունների կրկնությամբ ընդգծվում է նախնական նշանակությունը: Այսպիսի դերանունները կարող են կիրառվել թե որոշչային, թե պարագայական գործառնություններով:

Որքան-որքան, քանի-քանի, ինչքան-ինչքան կրկնավոր դերանունները շատ հաճախ զուգորդվում են *անգամ* կապի հետ և պարագայական կիրառությամբ նշում գործողության, եղելության բազմակիություն, կրկնելիություն կամ պարզապես՝ շատություն քանակական հատկանիշի իմաստով, իբրև *շատ-շատ, չափազանց շատ*, շարահյուսորեն դառնալով չափ ու քանակի պարագա:

Դիտելի է նաև, որ հատկապես հարցական դերանուններից կազմված կրկնավոր բարդությունները մինևույն կաղապարով պատկանում է նաև ժամանակակից խոսակցական պարսկերենը: Հմմտ. *چند چند* (čand-čand = քանի"-քանի"), *چي چي* (či-či = ի՞նչ-ի՞նչ):

Կրկին գալով հայերենին հավելենք, որ *քանի-քանի, որքան-որքան, ինչքան-ինչքան* կրկնավորները ովորաբար արտաբերվում են բացականչական որոշակի հնչերանգով, որը գրության մեջ արտահայտվում է հատուկ գրանշանով /*grafema, графема*/ երկարացման նշանով /*ˊ*/: Չայնային հատուկ

ելևելավորումը ոչ միայն զգացական մի առանձին լիցք է հաղորդում խոսքին, այլև հարստացնում բառի իմաստային կառուցվածքը նոր երանգավորումներով:

Սյուս խոսքի մասերից վերլուծական կրկնավոր բարդություններ կազմում են հատկապես բայը և ծայնարկությունը, որոնց, սակայն այս հոդվածում չենք անդրադառնում. դրանք առանձին քննության նյութ են:

Այսպիսով հայերենին և պարսկերենին հատուկ կրկնավոր բարդությունները՝ իրենց բոլոր տարատեսակներով /հնչյունափոխված ու անհնչյունափոխ, նշույթավոր ու աննշույթ/, իրենց այլևայլ գործառնություններով, դրսևորում են ծագումնաբանական, ստացվածքային որոշակի առնչություններ, կաղապարման և առհասարակ բառաքերականական բնութագրերի ակնհայտ ընդհանրություններ: Այդ ընդհանրությունները պայմանավորված են ոչ միայն տիպաբանական-կառուցվածքային շփման շատ եզրեր ունեցող հիմքերով, այլև լեզվական-մշակութային անչափ սերտ ու բարեկամական դարավոր աղերսներով, փոխադարձ ազդեցություններով, ներթափանցումներով:

Վերլուծական կրկնավոր բաղադրությունները թե՛ հայերենում և թե՛ պարսկերենում, առավելապես բնութագրական լինելով ժողովրդական-խոսակցական լեզվին, օժտված են վառ հուզաարտահայտչականությամբ, պատկերավորությամբ, կենդանի ավիշով ու պեսպիսությամբ: Դրանք ցայտուն արտահայտությունն են երկու ժողովուրդների խիստ ինքնատիպ ու գեղակերպ լեզվական մտածողության: